ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2004թ. փետրվարի 20-ին թիվ 53 որոշմամբ ընդունել է հակակոռուպցիոն միջոցառումների ծրագիր, որտեղ Դատարանների նախագահների խորհուրդն անդրադառնում է այն հարցերին, որոնց լուծումը գտնվում է իր իրավասության ոլորտում: Դրանք համակարգված ձևով կարելի է ներկայացնել հետևյալ ենթակետերում՝

1. Կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների դատական պրակտիկայի ամփոփում, դատավորների համար գիտագործնական առաջարկությունների և խորհրդատվական պարզաբանումների մշակում.

2. Կոռուպցիայի հետ կապված հանցագործությունների դատական քննության առանձնահատկությունների վերաբերյալ դատավորների ուսուցում և վերապատրաստում.

3. Դատական համակարգի հրապարակայնության և դատական իշխանության թափանցիկության, դատական պրակտիկայի կանխատեսելիության և կայունության ապահովում.

3.1. ՀՀ դատական համակարգի ինտերնետային էջի լիարժեք գործունեության ապահովում՝ առաջին ատյանի, վերաքննիչ, տնտեսական և վճռաբեկ դատարանների որոշումների կանոնավոր մուտքագրում, վճռաբեկ դատարանի որոշումների հրատարակում.

3.2. ՀՀ ազգային դատական արխիվի ստեղծում. դատական գործերի մատչելիության ժամանակակից տեխնոլոգիաների ներդրում.

4. Դատավորի վարքագծի կանոնների լրամշակում՝ այդ կանոնների խախտման համար նրանց պատասխանատվության ենթարկելու հիմքերի և մեխանիզմների հստակեցման նպատակով.

5. Դատարաններում գործավարության մանրամասն կանոնակարգում, դատարանների աշխատակազմերի պաշտոնյաների կարգավիճակի, իրավունքների և պարտականությունների ամրագրում և ճշտում.

6. Գործերը դատավորների միջև բաշխելու օբյեկտիվ կարգի սահմանում.

7. Ակտիվ մասնակցություն ՀՀ դատահրավական բարեփոխումների երկրորդ փուլին, օրենսդրական առաջարկությունների փաթեթի ստեղծում՝ կոռուպցիոն ռիսկերի նվազեցման կամ վերացման, դատական համակարգի անկախության և արդյունավետության բարձրացման նպատակով:

Նշված հարցերի լուծումը տրվել է ՀՀ դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունվող ակտերով՝ դատական պրակտիկայի այս կամ այն հարցերը պարզաբանելու, դատարաններին օրենքի՝ խորհրդատվական բնույթի պարզաբանումներ տալու, ինչպես նաև մի շարք այլ տարաբնույթ որոշումներ կայացնելու միջոցով:

Մասնավորապես.

- ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2004թ. հունիսի 14-ին ընդունել է «Առաջին ատյանի դատարաններում գործերի բաշխման կարգ սահմանելու մասին» թիվ 54 որոշումը:

- ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն առանձնակի ուշադրություն է դարձնում դատական գործունեության մատչելիությանը և թափանցիկությանը:

2005թ. մարտ ամսին ստեղծվել է ՀՀ տնտեսական դատարանի ինտերնետային կայքը՝ www.economic-court.am, որում տեղադրված և պարբերաբար լրացվում են դատարանի կողմից կայացված դատական ակտերը:

ՀՀ վճռաբեկ, վերաքննիչ, ինչպես նաև տնտեսական դատարանների կողմից կայացված դատական ակտերը տեղադրված են ՀՀ վճռաբեկ դատարանի ինտերնետային կայքում՝ www.armenian-judiciary.am, իսկ առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերը՝ www.region.am կայքում:

Դատական որոշումների մատչելիության առումով մյուս կարևոր ուղղությունն է հանդիսանում Վճռաբեկ և Տնտեսական դատարանների որոշումների հրատարակումը (թվով 12 հատոր՝ յուրաքանչյուրը 1000 օրինակով): Այս գործընթացը նույնպես շարունակական բնույթ է կրում:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդն Ամերիկյան Իրավաբանների Ընկերակցության հետ համատեղ իրականացնում է Ազգային դատական արխիվի ծրագիրը: Այսպես, 2002թ. դեկտեմբերի 1-ից մինչև 2003թ. ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածում, ՀՀ օրենսդրությանը համապատասխան արխիվային մշակման ենթարկվեցին և մուտքագրվեցին 8838 քաղաքացիական և 3453 քրեական գործեր: Ընդ որում, մուտքագրումն իրականացվեց արխիվային փնտրողական համակարգի մեջ, որը նույնպես ստեղծվեց այս ծրագրի շրջանակներում և վիթխարի չափով բարձրացրեց նշված գործերի մատչելիության, դրանցով արխիվային գործի արդյունավետության մակարդակը:

Ավելին, ՀՀ Կառավարությունը, հիմք ընդունելով ՀՀ դատական արխիվի կենտրոնացման կարևորությունը, ինչպես նաև ծրագրի շարունակականության հեռանկարը, ՀՀ դատարանների նախագահների խորհրդին հատկացրեց Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի նախկին երկհարկանի շենքը, որը վերանորոգվեց 2004թ. ընթացքում:

Չնայած որ, դատարանների նախագահների խորհրդի կողմից ընդունված հակակոռուպցիոն ծրագրով նախատեսված աշխատանքները կատարվել են, և դրանք ընդհանուր առմամբ կարելի է գնահատել դրական, սակայն ՀՀ դատական նոր համակարգի գործունեության վեցամյա փորձը ցույց տվեց, որ դատական իշխանության կողմից կոռուպցիայի դեմ մղվող պայքարի տեսանկյունից մեզանում դեռևս շատ ու շատ հարցեր կարիք ունեն լուծման՝ թե՛ օրենսդրական, թե՛ պրակտիկ գործունեության ուղեցույցների ստեղծման մակարդակով, թե՛ եղած նորմատիվ իրավական ակտերի կիրառման գործընթացի կատարելագործման իմաստով:

Հակակոռուպցիոն միջոցառումները պետք է ունենան համալիր լուծումներ, որի ուղղությամբ, սկսած 2005 թվականի հունիս ամսից իրականացվել են հետևյալ աշխատանքները:

- Սկսվել են ՀՀ վճռաբեկ դատարանի շենքի վերանորոգման աշխատանքները, որի արդյունքում վերանորոգվել են դատական նիստերի դահլիճներից մեկը, դատարանների նախագահների խորհրդի նիստերի դահլիճը, դատավորների և դատարանի աշխատակազմի աշխատասենյակները, շենքի տանիքը, ներքին ջրամատակարարման համակարգը, այդ թվում՝ ծառայողական զուգարանները և դատարանի շենքի ընդհանուր օգտագործման տարածքները: Նշված աշխատանքները շարունակական բնույթ են կրում պետական բյուջեի միջոցների հաշվին:

- Կատարվել է Վճռաբեկ դատարանի աշխատակազմի կառուցվածքային փոփոխություն, մասնավորապես ստեղծվել են նոր կառուցվածքային

ստորաբաժանումներ: Դրանք են՝ իրավական փորձաքննությունների վարչությունը, որի գործունեությունն իրականացվում է հետևյալ ուղղություններով՝

1) Վճռաբեկ դատարանի կայացրած և հրապարակված բոլոր որոշումների նախագծերը փորձաքննության են ենթարկվում, այն իմաստով, որ մասնագետների կողմից պալատներին տրամադրվեն տեղեկանքներ տվյալ ակտի հիմնավորվածության և պատճառաբանվածության վերաբերյալ.

2) Մինչև Վճռաբեկ դատարանի կողմից որոշումների կայացումը դատավորի հայտի հիման վրա տեղեկանք է տրամադրվում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպերի, Վճռաբեկ դատարանի կողմից նախկինում քննված գործերով որոշումների, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի»՝ տվյալ հարցի վերաբերյալ առկա դոկտրինալ մեկնաբանությունների, իրավունքի այս կամ այն ինստիտուտի վերաբերյալ տեսական տարբեր մոտեցումների, իրավունքի զարգացման նոր ուղղությունների, տվյալ հարցին առնչվող Սահմանադրական դատարանի որոշումների մասին և այլն.

- Նոր կառուցվածքային ստորաբաժանում է դատարանների նախագահների խորհրդի քարտուղարությունը, որը կոչված է ապահովելու դատարանների նախագահների խորհրդի և Արդարադատության խորհրդի լիազորությունների արդյունավետ իրականացումը: Այդ նպատակով քարտուղարության կազմում ստեղծվել են դատական պրակտիկայի ամփոփման և վիճակագրության վարչությունը, միջազգային կապերի և արարողակարգի ծառայությունը, դատավորների վերապատրաստման կենտրոնը, կազմակերպական, բյուջետային բաժինները, աուդիտորական խումբը և ՀՀ դատարանների արխիվը:

- Ստեղծվել են նաև նոր հաստիքներ, մասնավորապես դատարանի նախագահի խորհրդականների և մամլո քարտուղարի:

- Վճռաբեկ դատարանը մշակել է ԶԼՄ-ների հետ համագործակցության դատական համակարգի համար միասնական հայեցակարգ և, ելնելով նրանում ամրագրված սկզբունքներից, իրականացնում է տեղեկատվական ապահովումը հասարակայնության հետ: Դատական իշխանության սկզբունքային խնդիրներից է հնարավորինս մատչելի դարձնել դատարանների գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը: Վճռաբեկ դատարանում տեղեկատվության համակարգման աշխատանքներն իրականացվում են մամլո քարտուղարի միջոցով: Այս առումով կարևոր խնդիր է հանդիսանում բոլոր դատարաններում մամլո ծառայությունների ստեղծումը:

- Ներկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ դատական համակարգի տեղեկատվական միասնական պորտալ ստեղծելու ուղղությամբ, որտեղ հնարավոր կլինի ներկայացնել ողջ դատական իշխանությունը: ՀՀ պետական բյուջեով նման ծրագրերի ստեղծման համար միջոցներ հատկացված չլինելու պատճառով ներկայումս աշխատանքներ են տարվում հնարավոր ֆինանսավորում և աջակցություն ձեռք բերելու ուղղությամբ:

- Դատավորների վերապատրաստման կենտրոնը դատավորների և դատարանի աշխատողների համար կազմակերպում է մասնագիտական ուսուցում և վերապատրաստում, որի նպատակն այն հիմնարար գիտելիքներ տալն է, որոնք անհրաժեշտ են դատավորներին իրենց մասնագիտական պարտականություններն անկողմնակալ, անաչառ կատարելու համար: Դատավորների վերապատրաստման ծրագրերը ներառում են նաև համապատասխան դասընթացներ՝ ուղղված կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերի դատական քննության արդյունավետության բարձրացմանը, դատական պրակտիկայի միասնականությանն ու կանխատեսելիության ապահովմանը: Մասնավորապես, կազմակերպվել են ՀՀ

դատավորների և դատարանների աշխատակազմերի համար սեմինար-քննարկումներ հետևյալ թեմաներով «ՀՀ ընտանեկան օրեսգիրք», «ՀՀ նոր աշխատանքային օրեսգիրք», ««ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք», «Մտավոր սեփականության իրավունքի պաշտպանություն», ««Անվճարունակության /սնանկության/ մասին» ՀՀ նոր օրենքի անհրաժեշտության մասին», «Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի հիմնարար դրույթների վերաբերյալ», «Օրհուսի կոնվենցիայի հարցերի վերաբերյալ»: 2005 թվականի 4-րդ եռամսյակում յուրաքանչյուր շաբաթ օր անցկացվում էր սեմինար-քննարկում Վճռաբեկ դատարանի և Տնտեսական դատարանի դատավորների համար՝ վերջիններիս կողմից առաջադրված թեմաներով:

Դատավորների վերապատրաստման կենտրոնի, որպես դատահրավական բարեփոխումների դեռ վաղ շրջանում ստեղծված մի կառույցի աշխատանքները, չնայած շատ օգտակար են, այնուհանդերձ չեն կարող բավարար համարվել: Դատավորների և դատարանների աշխատողների նախնական և մասնագիտական ուսուցումն ու վերապատրաստումը շարունակական և կանոնակարգված հիմքերի վրա դնելու համար հարկավոր է ստեղծել մի կառույց, որը կունենա կրթական նման նպատակներ հետապնդող, ՀՀ օրենսդրությանը համապատասխան կարգավիճակ և պրոֆեսիոնալ աշխատակազմ: Դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ ծառացած խնդիրները՝ դատավորների ընթացիկ վերապատրաստումը, այդ թվում՝ նշանակումը, միավորվեն և իրականացվեն Դատական դպրոցում: Մշակվել է դատավորների 2006 թվականի վերապատրաստման շարունակական ծրագիր, որն իր մեջ ներառում է մեկ տարվա ընթացքում յուրաքանչյուր դատավորի 120 ժամ վերապատրաստում: Մշակվել է նաև դատական ծառայողների 2006 թվականի վերապատրաստման ծրագիր:

- Աշխատանքներ են տարվում դատական գործերի մշակման, արխիվային որոնման ցանցում 1995թ-ից հետո ընկած ժամանակահատվածի գործերի վերամշակման, ինչպես նաև ՀՀ դատարանների արխիվի նոր շենքի արդիականացման ուղղությամբ: Ներկայումս մշակվում է ՀՀ դատարաններում արխիվային գործի վարման կարգ, ինչը կնպաստի դատական գործերի պահպանման միասնականությանը:

- Միջազգային կապերի և արարողակարգի ծառայության միջոցով համակարգվում են ՀՀ դատական համակարգի արտաքին կապերը և ապահովվում են ՀՀ դատական համակարգի արարողակարգային հանդիպումները: Հունիս, հուլիս, օգոստոս ամիսներին Վճռաբեկ դատարանի նախագահը՝ դատարանի դատավորների և աշխատակազմի ներկայացուցիչների հետ այցելություններ է կազմակերպել Հանրապետության մարզային դատարաններ՝ տեղերում դատարանների աշխատանքներին և կարիքներին ծանոթանալու նպատակով: Ուսումնասիրությունների ամփոփման արդյունքում ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Սույն թվականի հոկտեմբեր ամսին ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի գլխավորած պատվիրակության Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն կատարած պաշտոնական այցի ժամանակ ստորագրվեց Համաձայնագիր՝ «ՀՀ վճռաբեկ դատարանի և ԼՂՀ Գերագույն դատարանի միջև համագործակցության և իրավական տեղեկատվության փոխանակման մասին»: Համաձայնագրով նախատեսվում է համագործակցություն, որն իր մեջ ներառում է և՛ իրավական տեղեկատվության փոխանակում, և՛ իրավական աջակցություն, և՛ համատեղ ծրագրերի մշակում, որոնք ենթադրում են ինչպես դատավորների վերապատրաստման և ուսուցման ծրագրերի, այնպես էլ համատեղ գիտական և ուսումնական առանձին ծրագրերի իրականացում: Փորձաքննության է ենթարկվել «Դատարանակազմության մասին» ԼՂՀ օրենքի նախագիծը, ԼՂՀ դատական համակարգին պարբերաբար տրամադրվում են ՀՀ

դատարանների նախագահների խորհրդի բոլոր որոշումները, ինչպես նաև «Դատական իշխանություն» ամսագիրը :

Կազմակերպվել են ՀՀ դատական համակարգի ներկայացուցիչների այցերը ՀՀ միջազգային կոնֆերանսներին մասնակցելու համար, ինչպես նաև ՀՀ դատավորների միության ներկայացուցիչների այցը Դատավորների միջազգային միության 48-րդ համաժողովին, որի ժամանակ քննարկվեց և ընդունվեց ՀՀ դատավորների միության անդամակցությունն այդ հեղինակավոր կազմակերպությանը:

- Բյուջետային բաժնի գործունեության արդյունքում հնարավոր եղավ 2006 թվականի դատարանների բյուջեում ներառել և հիմնավորել դատարանների պահպանման համար անհրաժեշտ ծախսերը, դատական ծառայողների աշխատավարձի աճը: 2005 թվականի սեպտեմբերի 20-ին ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը որոշում է ընդունել /թիվ 70/ ՀՀ դատարանների կողմից բյուջետային պարտքերի կանխման մասին, որի հետևանք եղավ ՀՀ դատարանների կողմից բյուջետային միջոցների տնօրինման օրինականության մասին վերլուծության կատարումը և հնարավոր խախտումների կանխումը: ՀՀ դատարանների կողմից բյուջետային միջոցների տնօրինման վերլուծության արդյունքում հնարավոր եղավ բացահայտել ՀՀ դատարանների կողմից ոչ նպատակային ծախսային ուղղություններով նախատեսված միջոցներ և դրանք ուղղել դատարանների գործունեության համար անհրաժեշտ ուղղությունների: Կազմվել է 2007-2009 թթ. ՀՀ դատական համակարգի միջնաժամկետ ծախսային ծրագիրը, որն իր մեջ ներառում է դատահրավական բարեփոխումների երկրորդ փուլի իրականացման հետևանքով առաջացող բյուջետային ծախսերը, դատարանների բնականոն գործունեությունն ապահովելու և պահպանման ծախսերը, ինչպես նաև ՀՀ Կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության ծրագրի իրականացման միջոցառումներով՝ 8.5 կետով նախատեսված դատավորների աշխատավարձի բարձրացումը:

- Դատական պրակտիկայի ամփոփման և դատական վիճակագրության վարչության գործունեության համար հաստավել է վերջինիս գործունեության կարգը, մեկ աշխատակից գործուղվել է ՌԴ Գերագույն դատարան և ՌԴ Բարձրագույն արբիտրաժային դատարան՝ փորձի փոխանակման նպատակով, իր գործունեության ընթացքում վարչությունն ամփոփել է ՀՀ քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի (խուլիգանություն) վերաբերյալ դատական պրակտիկան, որը հիմք է հանդիսացել ՀՀ ԴՆԽ-ի կողմից պարզաբանում պարունակող որոշում ընդունելու համար, ամփոփվել են նաև ՀՀ դատարաններում Երևան քաղաքի կառուցապատման ծրագրերի հետ կապված՝ քաղաքացիների սեփականությունը հանդիսացող հողամասերի և անշարժ գույքի հարկադիր օտարման վերաբերյալ ավարտված քաղաքացիական գործերով, 2005թ. 1-ին կիսամյակի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և տնտեսական, քրեական և զինվորական գործերով պալատների կողմից բեկանված վճիռներով գործերի քննության, Երևան քաղաքի առաջին ատյանի դատարանների կողմից քրեական դատավարության մինչդատական փուլում կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ նախաքննության մարմինների կողմից ներկայացված միջնորդությունների քննության, ինչպես նաև 2005թ.-ի ընթացքում ՀՀ քաղաքացիական գործեր քննող դատարանների կողմից ընտրական գործընթացների վերաբերյալ /ընտրական վեճերի/ ավարտված քաղաքացիական գործերի քննության դատական պրակտիկան:

Կատարվել է 2005թ. 1-ին կիսամյակում ՀՀ դատարանների կողմից ստացված քաղաքացիական, քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վիճակագրական հաշվետվությունների ամփոփում, որոնց հիման վրա ՀՀ

վճռաբեկ դատարանի պալատների գործունեության վերաբերյալ կազմվել է վիճակագրական տեսություն:

Դատարաններում գործերի կառավարման կարևորագույն բաղադրիչներից մեկը դատարանների կողմից իրականացվող գործառույթների ավտոմատացումն է: Նշված համակարգի ներդրման հետ կապված աշխատանքներն իրականացվում են ՀՀ դատահիրավական բարեփոխումների բաղադրիչը հանդիսացող ՀՀ դատարանների արդիականացման ծրագրի շրջանակներում, որում ակտիվ մասնակցություն ունի դատական համակարգը: Դատարանների ավտոմատացման կառավարման ծրագիրը իր մեջ ներառում է ինչպես գործերի կառավարման համակարգը /դատական ողջ գործավարությունը/, այնպես էլ ֆինանսական և անձնակազմի կառավարման համակարգերը: Ծրագրի ներդրման արդյունքում հնարավոր կլինի կենտրոնացնել դատարաններում առկա տեղեկատվությունը և ստանալ ամփոփ տեղեկատվություն դատական համակարգում յուրաքանչյուր գործի շարժի, բյուջետային միջոցների տնօրինման, դատարանների աշխատողների գիտելիքների, հմտությունների և կարողությունների աստիճանի, այդ թվում՝ վերջիններիս վերապատրաստման անհրաժեշտության մասին: Այս ծրագիրը հնարավոր կլինի համակցել դատական համակարգի պորտալին, որը թափանցիկ կդարձնի դատական իշխանությունը:

- Վերջին ժամանակներս դատարանների նախագահների խորհուրդն առավել գործուն է, խորհրդի նիստերը գումարվում են գրեթե ամեն ամիս կամ ամիսը երկու անգամ:

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը՝ խորհրդի լիազորությունների լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով 2005 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 64 որոշմամբ խորհրդում ձևավորել է 6 հանձնաժողով /էթիկայի, օրենսդրական, դատական պրակտիկայի և վիճակագրության, դատավորների վերապատրաստման, բյուջետային, կազմակերպական/:

. ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 2001թ. դեկտեմբերի 27-ին հաստատել է «Դատավորի վարքագծի կանոնագիրքը»:

Նշված փաստաթուղթը փոփոխությունների ենթարկվեց, որպեսզի համապատասխանեցվի դատավորի անկախության, վարքագծի և պրոֆեսիոնալիզմի միջազգային՝ ներառյալ Եվրոխորհրդի չափանիշներին: Սույն թվականի հոկտեմբերի 10-ին Դատավորների միության ընդհանուր ժողովում հավանության արժանացավ «ՀՀ դատավորի վարքագծի կանոնագրքի» նոր նախագիծը և ներկայացվեց ՀՀ դատարանների նախագահների խորհրդի հաստատմանը: Դեկտեմբերի 8-ին թիվ 87 որոշմամբ դատարանների նախագահների խորհուրդը հաստատեց «ՀՀ դատավորի վարքագծի կանոնագիրքը»: Նոր կանոնագիրքը հիմնված է աշխարհի տարբեր երկրների դատավորների մշակած մասնագիտական չափանիշների հանրագումարի, այդ թվում՝ Բանգալորյան սկզբունքների վրա:

. 2005 թվականի սեպտեմբերի 20-ին ընդունվել է նաև դատական գործի էջերի վավերացման կարգը հաստատելու մասին որոշում /թիվ 65/, որով հաստատվել է դատական գործի էջերը վավերացնելու մասին կարգը, ինչպես նաև վավերացման դրոշմակնիքի ձևերը:

- Վերոհիշյալ գործողությունները կատարվել են գործող օրենսդրության շրջանակներում և ուղղված են եղել դատական համակարգի միասնական կառավարմանը, թերությունների շտկմանը, դատական համակարգի ներուժի և գործունեության գնահատմանը: Ակնհայտ է, որ ՀՀ գործող օրենսդրությունը չի ապահովում դատարանների, որպես իշխանության ինքնուրույն ճյուղի, լիարժեք և արդյունավետ գործունեությունը: Դրա իրականացման համար մշակվել է ՀՀ դատական իշխանության գործունեությունը կանոնակարգող նոր օրենքի նախագիծ: